

ՆԱԼՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

Լ. ՄԱՆՎԵԼՅԱՆԻ «ՌՈՒՍԱԼԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Լ. Վ. ԴԱՎԹՅԱՆ

Լևոն Մանվելյանը արժեքավոր ներդրում է կատարել հայ գրականության պատմության մեջ. նրա «Ռուսահայ գրականության պատմությունը» (1909 թ.) երկրորդ փորձն է Լեոյից հետո, արևելահայ գրականության ամբողջական պատմություն ստեղծելու ուղղությամբ: Աշխատությունը ընդգրկում է արևելահայ գրականության զարգացումը ամբողջ XIX դարի ընթացքում:

«Ռուսահայ գրականության պատմությունը» ուսումնական ձեռնարկ է՝ միջնակարգ ուսուցման մակարդակով, ուստի և նյութի ընդգրկման խորությունն ու սահմանները, ինչպես նաև շարադրանքի բնույթը, ենթարկված են այդ նպատակին: Հեղինակը գերադասում է շարադրանքի հանրամատչելի ձևը, խուսափում վերացական բնորոշումներից՝ ղեկավարվելով նյութի գրական շարադրման սկզբունքով՝ ինչպես ժամանակաշրջանների բնութագրման, այնպես էլ առանձին հեղինակների ստեղծագործությունների վերլուծության ժամանակ: Եվ եթե սրան ավելացնենք նաև Մանվելյանի ճկուն ու պարզ լեզուն, հետաքրքիր ու պատկերավոր պատմելի ձևը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու «Ռուսահայ գրականության պատմությունը» երկար տարիներ միջնակարգ դպրոցի ամենատարածված դասագիրքն էր:

Գրականության զարգացման պատմական ընթացքի ուսումնասիրության, գրական առանձին երևույթները զարգացման միասնական շղթայի մեջ դիտելու գիտական սկզբունքներով, ինչպես նաև առանձին երևույթների ետևում օբյեկտիվ օրինաչափություններ նշմարելու ունակությամբ Մանվելյանը զգալիորեն առաջ է անցնում իր բոլոր նախորդներից: Հատկապես գրականության պատմության նրա պարբերացումը, ինչպես նկատված է՝, խորապես գիտական է նույնիսկ ժամանակակից գրականագիտության տեսանկյունից: Մանվելյանը գրականության պատմության պարբերացման հիմք է ընդունում հասարակական կյանքի դարգացման օրինաչափությունները, ընդ որում և ինչու է այն տեսակետից, թե ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքի կարևոր իրադարձությունները իրենց անմիջական ազդեցությունն են թողնում գրականության վրա: Մանվելյանը գրականության պատմությունը չի դիտել իբրև գրական փաստերի արձանագրություն ու բնութագրություն ժամանակագրական հաջորդականությամբ: Գրա-պատմական իրողությունները, նրա կարծիքով, պետք է խմբավորվեն որոշակի սկզբունքով, որը պետք է արտահայտվի հիմնականը հրկրորդականից տարբերակելու, գրականության զարգացման յուրաքանչյուր շրջան իր բնորոշ առանձնահատկություններով դիտելու մեջ: Այս տեսակետից գրականության պատմությունը զգալիորեն տարբերվում է գրաքննադատությունից: Գրականության պատմաբանը պարտավոր է գրականության զարգացման ընթացքը դիտել ամենաընդհանուր գծերով, որպեսզի մանրամասների մեջ չկորչի գլխավոր օրինաչափությունը: Իր «Պատմության» մեջ Մանվելյանը ղեկավարվել է այդ սկզբունքով ոչ միայն շրջանների, այլև առանձին հեղինակների ստեղծագործության բնութագիրը տալիս:

Արևելահայ նոր գրականության սկզբնավորումը Մանվելյանը կապում է XIX դարի վերջին հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարված շրջադարձային տեղաշարժերի հետ: «Ռուսահայոց մտավոր վերածնության» իսկական սկիզբը համարելով 1858 թ., որովհետև «այդ տարին մի առանձին նշանակություն է ստանում մեզանում շնորհիվ այն արտասովոր կենդանության, որ նկատելի է ռուսահայոց մտավոր կյանքում», Մանվելյանն այնուամենայնիվ չի անտեսում պատմական այն օրինաչափությունը, որի համաձայն «ոչ մի նշանավոր երևույթ ազգերի կյանքում տեղի չի ունենում հանկարծ և միանգամից. պետք է եղած լինեն բարեհաջող պայմաններ, պետք է եղած լինի մի նախընթաց շրջան, որի ընթացքում կազմվել է սաղմը: Նոր ժամա-

1 Տե՛ս Ս. Ս ա ր ի ն յ ա ն, Գրական դիտողություններ, Երևան, 1964, էջ 224—225:

նակի նշանները կարելի է տեսնել շատ սուաջ, երբ հինը դեռևս իր կատարյալ իշխանության մեջ է»։ XIX դ. 50-ական թթ. վերջերից սկիզբ առած դրական մեծ վերելքի նշանները նա տեսնում է դարի ամբողջ առաջին կեսի ընթացքում կատարված տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերափոխումների մեջ։ Թեև նորագույն գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ հայ նոր դրականության նախանշանները սկսում են երևալ արգեն XVIII դարի երկրորդ կեսին, բայց և այնպես Մանվելյանի տեսակետը գիտական որոշակի հիմք ունի։ Իրոք, ռուս-պարսկական պատերազմը, երկրի տնտեսական հարաբերությունների մեջ կապիտալիստական տարրերի զգալի աճը, այդ հիմքի վրա լուսավորական գաղափարների ազատ ներթափանցումը այնպիսի ծանրակշիռ գործոններ էին, որ չէին կարող նոր ուղղություն չհաղորդել հայ մտավոր կյանքին ընդհանրապես և գրականությանը՝ մասնավորապես։ Հատկանշական է, որ հայ նոր դրականության սկզբնավորման վերաբերյալ Մանվելյանի տեսակետը բազմազան տարբերակներով հարատևել է մինչև մեր օրերը և այժմ էլ ընդունվում է գրականության շատ պատմաբանների կողմից։

Այդ շրջանի ամենաբնորոշ գիծը Մանվելյանը համարում է աշխարհիկ բովանդակության և աշխարհարար լեզվի հաստատումը գրականության մեջ, միաժամանակ նկատում է, որ «աշխարհիկ բովանդակությունը մուտք գործեց մեր նոր գրականության մեջ ավելի վաղ, քան աշխարհիկ լեզուն»։ Այս իմաստով միանգամայն ճիշտ է գնահատում Ալ. Բրուսիլովսկի և Բաղդիսյանի գերընթացը շարունակական հաղթահարել գրաբարը. դա վիճակված էր Աբովյանին։ Սակայն, ինչպես նկատում է պատմաբանը, «այստեղ զանազանությունը միայն լեզվի մեջ է, բովանդակության կողմից նրանք երեքն էլ հետևում են միևնույն աշխարհիկ ուղղության»։ Աշխարհիկ բովանդակությունը չէր նշանակում միայն հրաժարումն միտոսիցիզմից ու սխոլաստիկայից։ Հենց այս շրջանում Մանվելյանը հասարակական գիտակցության մեջ նշմարում է ավելի էական ու խոր փոփոխություններ, որոնք նախանշում էին ռոմանտիզմի ծնունդը։ «Հայկական միտքը երկնային բարձունքից իջնում է երկիր, վերացականը իր տեղը դիջում է իրականությանը, կոնկրետ փաստերին, և մարդկային հոգին ազատվում է կուսպանքներից։ Դրական նոր ուղղությունը իր հարցասիրության առարկան դարձնում է մարդը, մարդու զարգացումը, միտքը և կենցաղը»²։

Մանվելյանը իրավացիորեն նկատում է, որ հասարակական մտածողության մեջ այս խոշոր բեկումը միանգամից չկատարվեց. դա մի դանդաղ ու տևական պրոցես էր, որ տևեց գրեթե մի ամբողջ հիսնամյակ։ Ծիշտ է, XIX դ. 40-ական թթ. սկզբին նոր մտածողությունն ու աշխարհըմբռնումը ըստ էության արդեն հաղթանակել էին հանձին Աբովյանի ստեղծագործության։ Սակայն Աբովյանի գործունեության մեջ տեսնելով 60-ականների գրական վերելքի նախանշանները, Մանվելյանը այնուամենայնիվ կարծում էր, որ իսկական վերածննդի ներկայացուցիչները նազարյանն ու նալբանդյանն են. «Ոսկեդարը եկավ նորա (Աբովյանի — Լ. Դ.) մահից տասը տարի հետո, երբ գրական և հասարակական ասպարեզը գրավեց նոր սերունդը»։ Այս իմաստով Մանվելյանը թերևս իրավունք ունի մեծ լուսավորչին համարելու ոչ թե վերածնության իսկական նախահայրը, այլ նախապատրաստական շրջանի վերջին և ամենամեծ ներկայացուցիչը։

Մանվելյանի աշխատությունը ստուգված է ավանդական սկզբունքով. յուրաքանչյուր շրջանի ընդհանուր և հանգամանալից բնութագրմանը հաջորդում են այդ շրջանի ամենաաչքի ընկնող գործիչների դիմանկարները։ Գրականության զարգացման ամբողջական փուլերի ընդհանուր բնութագրումների մեջ Մանվելյանը ձգտում է առաջին հերթին ցույց տալ հասարակական կյանքում տեղի ունեցած տնտեսական ու քաղաքական այն փոփոխությունները, որոնք համապատասխան փոփոխություններ են առաջ բերում նաև գրականության զարգացման ընդհանուր տենդենցների մեջ։

XIX դ. 60-ական թթ. Մանվելյանի պատկերացմամբ հայ գրական կյանքի իսկական վերածննդի շրջանն էին։ Ինչո՞ւ տասնամյակներ շարունակ նախապատրաստվող վերածնունդը իրողություն դարձավ միայն այս շրջանում։ Մանվելյանը խնդրին մոտենում է պատմականորեն։ Դարասկզբին կատարված քաղաքական բախտորոշ իրադարձությունները արևելահայության հոգեվոր կյանքում ստեղծեցին մի կենսունակ լուսավորական շարժում, որ աստիճանաբար բեկում առաջացրեց հասարակական մտածողության մեջ։ Սակայն որակական մի նոր, ավելի նշանակալից թռիչքի համար հասարակական զորեղ ազդակներ էին պետք։ «Կարծես թե սպասվում էր մի կողմնակի և զորեղ ցնցում, որպեսչի հասարակությունը սթափվի և կուլտուրական գործը ընդհանրանա»։ Այսպիսի պայմաններ ստեղծվեցին Ղրիմի պատերազմից հետո, երբ ցարիզմը ստիպված եղավ բարձրագույն մանիֆեստով վերացնել ճորտատիրական իրավունքը։ Իհարկե, Մանվելյանի աշխարհայացքի պատմական սահմանափակվածությունը թույլ չէր կարող տալ իրան

2 Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, պրակ Ա, 1909, էջ 22—23։

տեսնելու այդ ունեցողների իսկական բովանդակությունը: Բայց կարևորն այն է, որ գրականության պատմարանը նկատում է «Ռուսաստանում սկսված ազատարար շարժման» հեղաշրջող ազդեցությունը արևելահայության հոգևոր կյանքի վրա: Որքան էլ ձևական լինեց ցարական մանիֆեստը, այնուամենայնիվ, ճորտատիրական կարգերի իրավական վերացումը ավելի լայն «հնարավորություն բացեց գիտության, արվեստների ու գրականության զարգացման համար: Ռուսաստանի ազատարար շարժումը բարերար ազդեցություն ունեցավ մանավանդ հայության այն մասի վրա, որը մոտ էր կանգնած այդ շարժման՝ Մոսկվայի հառաջադեմ երիտասարդության: Հայերի համար ևս բացվեց ապագայի գեղեցիկ հեռանկար, և սկսվեց եռանդուն աշխատանք»³:

Այս նոր շրջանը Մանվելյանը համարում է «վարդագույն հույսերի, գեղեցիկ ծրագրերի ժամանակ»: Այս որակումները պատահական չեն. գրականության պատմարանը ճիշտ է նկատել 60-ական թթ. արևելահայ մտավորական շարժման բնույթը: Նպաստավոր պայմանները, որ ըստեղծվեցին միանգամից, արտասովոր կենդանություն առաջ բերեցին մամուլի, գրականության, թատրոնի մեջ: Ամենուրեք հանդես էին դալիս խանդավառ գործիչներ, առաջադրվում էին մեկը մյուսից համարձակ գործունեության ծրագրեր: Ստեղծվեցին մամուլի նոր կարևոր օրգաններ: «Հյուսիսափայլը» դարձավ 60-ական թթ. գաղափարական շարժման կենտրոնը: Այս ամենը, բրևականաբար, լուսավորականությունից տարբեր մի նոր ուղղություն պետք է առաջ բերեր գրականության մեջ: «Վերածնության հարազատ զավակն է և բանաստեղծությունը,— նկատում է Մանվելյանը:— Դժվար է երևակայել ավելի սերտ կապակցություն կյանքի և գրականության մեջ: Հայկական պոեզիան միանգամից կանգնեց ուղիղ շավղի վրա և դարձավ իրականության արտահայտիչ: Դարաշրջանի տիրապետող գաղափարները՝ լուսավորության քարոզներ, հայրենասիրություն, աշխարհաբարձր դատը — բոլորը արձագանք են գտնում բանաստեղծների երկերում: Բանաստեղծ և հրապարակախոս երգում էին միևնույն երգը»⁴: Այլ խոսքով, գրականության մեջ տիրապետող է դառնում ոռոմանտիկական ուղղությունը. Մանվելյանը դիպուկ ու բովանդակալից բնորոշումներով ուրվագծում է ոչ միայն ժամանակի հասարակական շարժման, այլև գրական նոր ուղղության բնույթը: Այդ նոր ուղղությունը գրականությունն ավելի մոտեցրեց կյանքին, բարձրացրեց նրա հասարակական դերը, դարձրեց ժողովրդի կենդանի ձայն⁵:

Մանվելյանը նրբորեն զգում է արևելահայ գրական կյանքի զարկերակը, նկատում է գրական զարգացման ամենաթույլ մակերևացություններն ու տեղատվությունները: Այսպես, XIX դ. 50—60-ական թթ. գրական բուռն վերելքին ու համընդհանուր ոգևորությանը 60-ական թթ. երկրորդ կեսին հաջորդեց կարճատև տեղատվություն, գրական կյանքի ակտիվության անկման կարճատև մի շրջան: «1858 թ. սկսած մտավոր շարժումը կանգ առավ 1865 թ.: Դրա հետ միասին հասարակաց տրամադրությունը, որ ծովի մակերևացության պես շարունակ բարձրանում էր, իջավ, և սկսվեց տեղատվություն: Այս տարտամ դրությունը տևեց մինչև 70-ական թվականների սկիզբը»⁶: «Հյուսիսափայլի» դադարումից հետո նկատելիորեն նվազեց մամուլի հասարակական դերը, ասպարեզի վրա եղած «Մեղու Հայաստանին» և «Հայկական աշխարհը» շունչին «Հյուսիսափայլի» մարտնչի ոգին: Լուսություն էր նաև գեղարվեստական գրականության ասպարեզում: Լուս էին նազարյանը, Պատկանյանն ու Շահազիզը, Նալբանդյանը չկար, Պոռոջյանը «Սոս և Վարդիթերից» հետո երկարատև ընդմիջման էր անցել:

Սակայն Մանվելյանը միայն փաստեր չի արձանագրում: Նա փորձում է գտնել էրևույթի պատճառը, չէ՞ որ ըստ նրա սկզբունքի գրական կյանքի ամեն մի նշանակալից երևույթ ունի իր հասարակական ազդակները: Տվյալ դեպքում Մանվելյանը մատնացույց է անում երկու ախտի գործոններ, որոնք մի տեսակ սուրյեկտիվ և օբյեկտիվ բնույթ ունեն: Նախ՝ «վերածնության շրջանում հայ գործիչների արդյունաբերող ուժերը շափազանց լարված էին: Այդ լարված դրությունը տևեց յոթ-ութ տարի, որի ընթացքում մի գրական գործ արդեն կատարված էր Դրան հետևեց մտադազար, հոգնածություն»: Երևույթը բացատրելու տեսակետից ավելի էական նշանակություն ունի պատմարանի հիշած երկրորդ գործոնը: «Մեր վերածնությունն ինքն ըստ ինքյան քարոզչական բնույթ ունեւր. քարոզում էր հրապարակախոսը, քարոզում էր բանաստեղծը: Մի քանի տարի շարունակ ծեծվում էին լուսավորության շուրջը պտտվող հարցեր: Ընթերցողների այն մասը, որոնք ընդունակ էին սեփականելու այդ գաղափարները, արդեն յուրացրել էին, և այնուհետև կրկնել միշտ միևնույնը՝ ուսում և ուսում՝ բոլորովին ավելորդ էր: Վերածնության

3 Նույն տեղում, էջ 95:

4 Նույն տեղում, պրակ Բ, էջ 25:

5 Նույն տեղում, պրակ Գ, էջ 3:

6 Նույն տեղում:

«ործիչներից շատերը կամ սպառված էին կամ առայժմ ոչինչ չունեին ասելու»⁷։ Ժամանակները փոխվել էին, ինչպես իրավացիորեն նկատում է Մանվելյանը, հարկավոր էին «ոչ թե քարոզներ, այլ գործ»։

Այնուամենայնիվ, պատմական ի՞նչ հանգամանքներով էր թելադրված հասարակական մրտաժողովյան մեջ կատարված այս բեկումը։ Մանվելյանի պատկերացումները դարսւշրջանի էության մասին, հարկավ, հեռու են ժամանակակից գիտական պատկերացումներից։ Բայց և այնպես նրա, թեկուզ և թուուցիկ, գիտողությունները ընդհուպ մոտենում են ճշմարտությանը։ Բանն այն է, որ գրականության պատմարանը, ժամանակի հասարակական գործունեության բնորոշ գիծը գիտելով գործնականությունը, ըստ էության կոհհում էր այն իրողությունը, որ ասպարեզ էր եկել հասարակական մի նոր ուժ՝ երիտասարդ հայ բուրժուազիան։ Պատահական չէ, որ 70-ական թթ. սկզբին ծայր առած մտավոր նոր շարժումը Մանվելյանն անմիջականորեն կապում է «Մշակի» գործունեության հետ։ Հրապարակախոսությունը ստանում է նոր ուղղություն ու բովանդակություն, ավելի է մեծանում մամուլի հասարակական կշիռը։ «Հրապարակախոսությունը դառնում է քաղաքակրթություն տարածելու զորավոր միջոց։ Օրագրության նշանակությունը, որ վերջին տարիները այնքան ընկել էր, այժմ հասնում է իր արժանի բարձրության, և կուլտուրական նվաճումները ավելի խոր են թափանցում ժողովրդի խավերի մեջ։ 60-ական թթ. կենսունակ ուժերը կրկին ասպարեզ են գալիս, և հայոց դրական հորիզոնում երեւում են նոր լուսատուներ»⁸։ Կարևոր փոփոխություններ են կատարվում նաև հայ ժողովրդի քաղաքական կյանքում։ Ազգային-ազատագրական ձգտումները, որ նախորդ տասնամյակում հանդես էին գալիս վերացական իդեալների ձևով, այժմ ստանում են պրակտիկ նշանակություն, որոշակի հասարակական գործունեության ձև։ Դիվանագիտական շարաշահումների ասպարեզ է մտնում հայոց հարցը, որ տասնամյակներ շարունակ անհամար ուժեր ու եռանդ պիտի խլեր հայ ժողովրդից։ Բարձրանում է ժողովրդի ազգային ինքնաճանաչությունը։ «Միևնույն ժամանակ ասպարեզ է գալիս մի երիտասարդ սերունդ, որ ներշնչվելով ազատամիտ գաղափարներով՝ ձգտում է դառնալ հայի կյանքում մի նոր կուլտուրական ուժ, և մյուս կողմից կազմակերպվում է պահպանողական կուսակցություն, և այսպիսով մեր մտավոր կյանքում սկսում են իրար հետ մրցել երկու հակառակ հոսանքներ»⁹։ Մանվելյանն, իհարկե, որոշակիորեն չի ներկայացնում բուն գրականության ներսում կատարված որակական փոփոխությունների իմաստը, այսինքն շրջանցում է գրական ուղղությունների պատմական հերթափոխության խնդիրը։ Բայց նրա ցույց տված պատմա-հասարակական իրողությունները հենց այն նախադրյալներն էին, որոնք հիմք հանդիսացան մի կողմից ռեալիզմի հետագա զարգացման, մյուս կողմից ռոմանտիզմի մի նոր վերելքի համար 70-ական թթ. ընթացքում։

Թեև Մանվելյանն առանձնացնում է ութսունական թվականները իբրև ինքնուրույն փուլ, բայց և այնպես նկատում է այնպիսի միասնական պրոցեսներ, որոնցով այդ տարիները կապվում են նախորդ տասնամյակի հետ։ Ամբողջ 70-ական թթ. ազատագրական հույսերի ու պատրանքների, առաջադիմության ակնկալությունների շրջան էին։ 1878 թ. հետո գալիս է հույսերի ու պատրանքների փլուզման շրջանը, որն իր կնիքն է դնում 80-ական թթ. առաջին կեսի գրական-հասարակական կյանքի վրա։ Ցարական կառավարությունը սահմանափակում է հայ ազգային առաջադիմության հնարավորությունները, 1885 թ. փակվում են հայկական դպրոցները, զգալիորեն սահմանափակվում է մամուլի ազատությունը։ Դա իսկապես հոգևոր կյանքի անկում էր, և այս իմաստով իրավացի է Մանվելյանը, երբ 80-ական թթ. համարում է ամլության տարիներ։ Բայց դա անկում էր միայն որոշակի աշխարհայեցողության, գրական որոշակի ուղղության համար։ Նույն շրջանում վերելք է ապրում մի այլ աշխարհայեցողություն, նոր, ռեալիստական մտածողություն։ Եվ դա ոչ միայն գրականության մեջ, այլև հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում։ Զարգացում են ապրում թատրոնը, նկարչությունը, երաժշտությունը։ Մանվելյանը առանձնապես նշանակալից տեղ է հատկացնում Գևորգ Բաշինջաղյանի և Կարա-Մուրզայի գործունեությանը, վերջինիս կողմից ժողովրդական երգերի հավաքմանը ու մշակմանը։ Այդ տարիներին է, որ պատրաստվում և գրական հրապարակ է մտնում նոր աշխարհայացքով ու մտածողությամբ օժտված երիտասարդ գրողների մի ամբողջ խումբ։ Իրենց գրական կյանքն են սկսում Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Ղոսը, բանաստեղծության մեջ հեղաշրջում է կատարում Հով-

⁷ Նույն տեղում, էջ 7։

⁸ Նույն տեղում, էջ 9։

⁹ Նույն տեղում։

հաննիսյանը: Այս նոր սերնդի ջանքերով 90-ական թթ. մեծ բարգավաճման է հասնում գրականությունը:

90-ական թվականները աշխատության մեջ բնութագրված են իբրև մեծ առաջադիմության և բարգավաճման շրջան: «Սկսվել էր մի եռանդուն աշխատանք թե մտավոր կենտրոններում և թե գավառներում: Հայաբնակ քաղաքները և գյուղերը ծածկվում էին դպրոցների ցանցով. հարյուրավոր ուսուցիչներ տարածում էին լույս և կրթություն խավար անկյուններում, տասնյակ հազարավոր աշակերտներ կրթություն էին ստանում: Հին սերունդը, որ միահեծան իշխում էր և տնօրինում ժողովրդի մտավոր և բարոյական պիտույքները, այժմ ուժասպառ թողնում է ասպարեզը, որ գրավում են հառաջադեմ երիտասարդության շարքերը»¹⁰:

Հասարակական կյանքի այժմ նոր երևույթները անխուսափելիորեն ազդում են դրականության վրա: Փոխվում են թեմաները, գաղափարները, գրականության ընդհանուր ուղղությունը: Մանվելյանը նկատում և բացահայտում է գրականության մեջ կատարված այդ որակական փոփոխությունները, թեև ընդարձակ բացատրություններով չի մեկնաբանում դրանց իմաստը: «90-ական թվականների բանաստեղծությունը,— գրում է նա,— տարբերվում է նախորդ շրջանի բանաստեղծությունից նրանով, որ նոր բանաստեղծության մեջ գրեթե բացակայում է ազգային մոտիվը: Ազգային մոտիվը այլևս չէր ոգևորում բանաստեղծներին: Նրանք գտել էին ոգևորության նոր աղբյուրներ, որոնք ավելի ընդարձակ էին. ...90-ական թվականների բանաստեղծության մեջ մեծ տեղ են բռնում ժողովուրդը և անհատական զգացմունքները»¹¹:

Առհասարակ ժամանակաշրջանը բնութագրելիս Մանվելյանը չի սահմանափակվում միայն գրական երևույթներով: Պատմական առաջընթացի անդրադարձումները նա նկատում և ցույց է տալիս հոգևոր մշակույթի բոլոր բնագավառներում, առանձին ուշադրություն նվիրում կրթական հիմնարկների ու մամուլի գործունեությանը և հենց այստեղ ընդհանուր ակնարկների մեջ բնութագրում դրականության, արվեստի, թատրոնի ու հրապարակախոսության գլխավոր ուղղությունները: Գրականության պատմաբանը հիշում է այն ճիշտ դրույթից, թե ժամանակաշրջանի համար բնորոշ տենդենցները ընդգրկում են ժողովրդի հոգևոր կյանքի, մտավոր ու կուլտուրական գործունեության բոլոր բնագավառները, այլապես այդ տեղաշարժերը չեն կարող դիտվել իբրև սամբոլիզացիայի շրջաններ բնորոշող հատկանիշներ: Գրականության զարգացման յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունները Մանվելյանը ձեռնարկ է գտնել այս կամ այն շրջանում գերակշռություն ստացած գրական ժանրերի ու սեռերի մեջ: Ուշադրության է արժանի հատկապես այն փաստը, որ նա առաջին անգամ գրականության պատմության մեջ ընդարձակ տեղ է հատկացնում թատրոնին ու դրամատուրգիային: Նա բարձր է գնահատում Սունդուկյանի դերը, նրան համարելով հայ դրամատուրգիայի հիմնադիրը: Մանվելյանի համոզմամբ Սունդուկյանի գլխավոր ծառայությունն այն է, որ նա «կենցաղագրական կոմեդիան, որ նրանից առաջ գտնվում էր սաղմնային դրության մեջ, հասցրեց իր գեղարվեստական կատարելության»:

Հայ հասարակական կյանքը իր բոլոր շրջաններում և բոլոր ելևէջներով արտացոլվել է պարբերական մամուլի մեջ: Այս իմաստով թերևս ոչ մի ժողովրդի կյանքում մամուլն այնպիսի լայն տեղ չի ունեցել, ինչպես հայ ժողովրդի կյանքում: Մանվելյան-պատմաբանը խորապես գիտակցում է հայ մամուլի այդ խոշոր նշանակությունը, ուստի և հասարակական ու գրական զարգացման յուրաքանչյուր շրջափուլի դեմքն ավելի ամբողջական գծերով ցույց տալու նպատակով համեմատաբար լայն պլանով քննում է մամուլի գործունեությունը: Նա հիմնականում ճիշտ է բնութագրում XIX դարի հայ մամուլի գրեթե բոլոր օրգանների ուղղությունը, և այդ առնչությամբ այս կամ այն չափով անդրադառնում նաև տարբեր շրջաններում գոյություն ունեցած հասարակական հոսանքների բնութագրման խնդրին: Մանվելյանը բարձր է գնահատում հայ մամուլի դերը հասարակական ու գրական կյանքի տեղաշարժերի մեջ, ցույց է տալիս, որ առանձին շրջաններում մամուլի մի շարք օրգաններ ուժվիրա են դառնում հասարակական մտքի համար: Այսպիսին էր, օրինակ, «Հյուսիսափայլը» 50—60-ական թթ., «Մշակը»՝ 70—80-ական թթ.: Առանձնապես բարձր է գնահատում Արծրունու հասարակական գործունեությունը և «Մշակի» դերը: «Արծրունու շնորհիվ,— գրում է Մանվելյանը,— բարձրացավ նաև մամուլի նշանակությունը, և ընթերցողը սկսեց ավելի մեծ հավատով վերաբերվել դեպի լրագրական խոսքը: Նորատի երիտասարդական այդ հավատը, որ տածում էին դեպի իրանց ղեկավարը, մեծ ծառայություն մատուցեց նույնիսկ Արծրունուն, խրախուսելով նրան իր հրապարակախոսական գործունեության մեջ: Նրա խոսքերը դարձան մի տեսակ պատգամներ նոր սերնդի համար, նրա բոլոր գաղափարները զանազան խըն-

¹⁰ Նույն տեղում, պրակ Դ, էջ 49:

¹¹ Նույն տեղում, էջ 65:

դիրներին մասին դարձան երիտասարդության սեփականություն և կազմակերպեցին նոր աշխարհայացք»¹²։ «Մշակի» դպրոցից են դուրս եկել 80-ական թթ. ականավոր գործիչներից շատերը։

Առանձին հեղինակների գրական դիմանկարների մեջ Մանվելյանը հավասարապես հանդես է գալիս իրրև գրաքննադատ և գրականության պատմաբան։ Ամենից առաջ գեղագիտական տեսակետից վերլուծվում են հեղինակի կարևոր ստեղծագործությունները, ընդ որում քննադատը ուշադրության կենտրոնում է պահում այնպիսիները, որոնք ամենից ավելի բնորոշ են հեղինակի ստեղծագործական անհատականության համար։ Մանվելյանը ձգտում է վերլուծվող ստեղծագործությունները ներկայացնել իրրև գեղարվեստական ամբողջականություն, անկողմնակալ հայացքով բնութագրում է դրանց ուժեղ և թույլ կողմերը, միշտ աչքի առաջ ունենալով մի կողմից գեղագիտական, մյուս կողմից՝ պատմականության շահանքները։ Քննադատը կարողանում է հեղինակին ամբողջությամբ ներկայացնել գաղափարական ու գեղարվեստական առնչությունների մեջ, ցույց է տալիս նրա կրած ազդեցությունները և այն ինքնուրույնը, որով նա դառնում է ուսուցիչ։ Սակայն ազդեցությունների հարցը Մանվելյանը դիտում է ոչ թե աշխարհայացքային ու գեղագիտական ներքին բարդ կապերի ձևով, այլ հաճախ հենվում է արտաքին նմանությունների վրա։ Այդ է պատճառը, որ նրա եզրակացությունները երբեմն ձևական բնույթ են կրում և անհամոզիչ են։ Այսպես, Մանվելյանի համոզմամբ Աշխենը «Սամվելում» զորքերի գլուխն անցած վանի պարիսպների տակ կռվելիս Շիրվերի Օրլեանի կույսն է նույն դերի մեջ։ Մուշեղի հրաժեշտը իր կնոջը հիշեցնում է Հեկտորի և Անդրոմաքեի հրաժեշտի տեսարանը, իսկ Սամվելը Համլետի երկվորյակն է։ Այս բոլոր նմանությունները, եթե պատահական էլ չեն, գոնե ուշադրության չպիտի առնվեն, քանի որ ըստ էության դա չէ գրական ազդեցությունը իսկական իմաստով։ Ավելի անհավանական է այդ նմանությունների բացատրությունը, Մանվելյանի կարծիքով «ըստ երևույթին, հեղինակը (Րաֆֆին — Լ. Դ.) ամեն կերպ աշխատել է իր մի քանի հերոսներին բարձրացնել մինչև դասական հերոսների աստիճանը», հետևաբար և դրանց նմանեցրել է դասական հերոսներին։

Սրանք, իհարկե, մասնակի դեպքեր են։ Ընդհանուր առմամբ Մանվելյանը ճիշտ է արժեքավորում Րաֆֆու, ինչպես և մյուս հեղինակների ստեղծագործությունները։ Իրրև գրականության պատմաբան Մանվելյանը կարողանում է բավական ճշտությամբ որոշել յուրաքանչյուր գրողի տեղը գրական ընդհանուր պրոցեսի մեջ։

Սովորաբար այդ խնդրին են նվիրված դիմանկարային գլուխների վերջին ամփոփիչ հատվածները, ուր պատմաբանը շարադրում է իր եզրակացությունները գրողի ստեղծագործության գեղագիտական արվեստի և պատմական դերի վերաբերյալ։ Այստեղ Մանվելյանը երբեմն փորձում է բնութագրել հեղինակի գրական ուղղությունը։ Սակայն այս հարցում նա միշտ չէ, որ կարողանում է ճիշտ կողմնորոշվել։ Րաֆֆու գրական ուղղությունն, օրինակ, բնութագրված է այսպես. «Րաֆֆին այն հեղինակներից չէր, որոնք պատկանում էին բացառապես մի ուղղության. նրա մեջ հեշտ ապրում էին զանազան ուղղություններ՝ նա և՛ ունակ էր, և՛ ունակ էր, և՛ տենդենցիոզ, նրա նշանաբանն է՝ «գեղարվեստը կյանքի համար», նրա առաջին պահանջն էր, որ գրվածքը կրթիչ նշանակություն ունենա, որ նա տա իդեալներ»։ Հատկանշական է, որ Րաֆֆու ստեղծագործական մեթոդի մասին այսպիսի տեսակետ պաշտպանվում էր տասնամյակներ շարունակ գրականության շատ ուրիշ պատմաբանների ու քննադատների կողմից։

Մանվելյանի «Պատմության» մեջ առհասարակ քիչ տեղ է բռնում գրական ուղղությունների հարցը։ Դա, իհարկե, մասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ հեղինակի համար դեռևս հստակված չէին գրական դպրոցների որակական սահմանները։

¹² Նույն տեղում, պրակ Գ, էջ 32—33։